

ՄԵԼԿ

Տարեկան զինը 5 բուրլ, կէս տարեկան 3 բուրլ:

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը և այլ տպագրատանը:

Պատարագարարացիք դիմում են ուղղակի
Tiflis, Redaktsia „Melik“

Խմբագրատանը բաց է առ ժամանակ 9-12 ժամ
(բացի կիրակի և տոհմապահ օրերից):

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզվով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրատանիւր բառից մի կոպէկ:

ԹԻՖԼԻՍԻ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻՑ

Օգոստոսի 6-ին, չորեքշաբթի օրը առաջին անգամ երևաց Ս. Պետրոբուրգի Բորսայի պաշտօնական բիւլլետենի մէջ Թիֆլիսի ԱՅՆՈՒԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՐԵՐ:

Այսին տոնոգնի դրաւ թիւերը:

18 տարով և 7 ամսով 94½ բուրլով նաղը փողով դրաւ թիւերը 100 բուրլով համար:

54½ տարով 93¾ բուրլով:

1 (3)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անցողական դրութեան մէջ. — Երբ ինչ տեսութիւն: Ներսիսեան դպրոցի տեսուչ Ս. Մանգինեանի առիթով, Նամակ Մոսկովայից: Նամակ Մեծ-Գաղէթից: Ներքին լուրեր: Արտաքին տեսութիւն: Ջոնսոն: Նամակ Գերմանիայից: Նամակ Սալոնիկից: Նամակ Լոնդոնից: Յայտարարութիւններ: Տեղեկացոյց:

ԱՆՏՈՂԱԿԱՆ ԴՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Ինչպէս յայտնի է ամենքին, վայրենի դրութեան մէջ գտնվող մարդը լինում է միշտ ֆիզիկական առողջ: Այդ երեւոյթի պատճառը այն է, որ վայրենի մարդը ֆիզիկական ազատ դարձանով բնութեան մէջ, մի և նոյն ժամանակ նրա բարոյական և մտաւոր կողմը անդադրեց, քանզի դրութեան մէջ գտնվելով, նրա հոգեւոր կողմը չենթարկվել ոչ մի բարձր գգացողական գրգռման, չը կրկնվի ոչ մի բարձր բարոյական տանջանքներ, որը յատուկ են լուսաւորված հասարակութեան անդամներին, ապրելով միայն, եթէ կարելի է ասել, անասնական կեանքով, — վայրենի մարդը լինում է ֆիզիկական առողջ և զօրեղ:

Ուրիշ կողմից յայտնի է ձիշտ գիտութիւնից, վիճակագրութիւնից, որ լուսաւորված երկրների թիւից, լուսաւորութեան զարգացման ամենաբարձր մակարդակի վրա կանգնած երկրներն են, ինչպէս Անգլիայում և Շվեյցարիայում մարդիկ ամենից շատ են ապրում: այդ երկրներում մարդի միջին կեանքի տևողութիւնը ամենաերկար է լինում:

Ամենանշանակաւ պայմանների մէջ թէ առողջութեան, թէ կեանքի տևողութեան կողմից գտնվում են այն հասարակութիւնները, որը թէ և վաղուց է դուրս են եկել սկզբնական, վայրենի դրութիւնից, բայց և չեն հասել դեռ լուսաւորութեան և հասարակական զարգացման բարձր աստիճանին:

Այդ տեսակ հասարակութիւնները կորցրել են վայրենի հասարակութիւններին յատուկ բնական ազատ կեանքը, բայց ուրիշ կողմից և չեն հասել դեռ ևս լուսաւորութեան բարձր աստիճանի վրա կանգնած հասարակութեան զարգացմանը, որտեղ հասարակական պայմանները հաւասարակշռութիւն են դնում մարդի թէ հոգեկան թէ ֆիզիկական կեանքի մէջ...

Այդպիսի անցողական դրութեան մէջ գտնվող հասարակութիւնները մեծ մասամբ ընդունել են լուսաւորված երկրներից կեանքի արտաքին ձևերը, առանց դեռ ևս բնութեան լինելու՝ բնութեւնը և իրանց սեփականելու նոցա կեանքի ոգին... Այդ տեսակ հասարակութիւնները կամենում են նմանվել ամեն բանում քաղաքակրթված ազգերին, բայց ընդունելով նրանց նկատողութիւնները թէ աշակերտների և թէ դաստան ալ և ալ դրութիւնների

դունելով նրանցից թէ հասարակական, թէ ընտանեկան կեանքի ալ և ալ եղանակները, չը գիտեն օրինաւոր կերպով գործ դնել ընդունածը՝ կամ ամեն բանի մէջ չափ ուստի ման են անցնում, անշնորհ կերպով են գործ դնում ինչ որ տեսնում են, ի չար են գործ ածում այն ամենը ինչ որ լուսաւորված երկրներում չափաւորված է և զգուշութեամբ է գործ դրվում...

Այդ տեսակ անցողական դրութեան մէջ գտնվում ենք և մենք հայերա:

Չը խօսելով այստեղ, որ այդ ճշմարտութիւնը վերաբերվում է մեր թէ անտեսական, թէ արդիւնազորական, թէ հասարակական կեանքին, մենք կը յիշենք այդտեղ միայն այն, որ մենք նոյն ձևով ենք վարվում և մեր ընտանեկան և ուսումնարանական կեանքում:

Այդ է պատճառը որ այն ամենը որ Եւրոպայում, դարեւոր փորձի վրա հիմնված լինելով, մեծ օգուտներ է բերում, մեզանում գործադրվել սկսելով, բացի փաստից ուրիշ ոչինչ մեզ չէ բերում:

Եւրոպայից վերցրած և մեզանում գործադրվող ընտանեկան կեանքի եղանակը, — աղավաղվում է: Լուսաւորված երկրներից վերցրած մանկավարժական մեթոդները, թէ ընտանեկան, թէ դպրոցական դաստիարակութեանը յարմարեցրած, — աղավաղվում են:

Եւ ինչ ենք տեսնում մեր արդեան հայոց հասարակութեան մէջ՝ ֆիզիկական և թոյլ, նուազ, մաշված, բարոյական և անհաստատ, վաշտած, մտաւորապէս բնական ընդունակութիւնները կորցրած, բթացրած նոր սերունդ...

Ուրիշ անգամ կը խօսենք թէ սորա հետեւեալը ինչ է լինում, և որտեղ է ելքը այդ անմիջիկապ դրութեանից...

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՍԻՍԵԱՆ ԴՐՈՒՑԻ ՏԵՍՈՒՑ Ս. ՄԱՆԴԻՆԻՍԻ ԱՌԻԹՈՎ

Գ. Մանդինեանը անցել 1874 թ. օգոստոսին ընտրվելով Ներս. Դպրոցի տեսուչ, սեպտեմբրի սկզբում հրաւիրեցաւ նորա հոգաբարձական վարչութիւնից իւր պաշտօնը վարելու: Առանց խօսելու այն շարժաթիթների վերայ թէ ինչ հանգամանքների ներքոյ հրաւիրեցին նորան այդ պաշտօնին, որը սակայն անայտ էր պարտին, ևս կամենում եմ առաջ բերել նորա գործունէութեան եղանակը և այն օգուտները, որ նորանից հասել է դպրոցի մանուկներին:

Եհնայն սկզբնական գաղափարը, որ նա յայտնեց իւր պաշտօնի մէջ մանկու ժամանակ:

Ինչպէս անձնաթիւ կը դպրոցի կազմակերպութեան հետ, ասում էր նա. մինչև մի տարի մի նոր փոփոխութիւն, մի նոր ուղղութիւն չեմ կարող մտնել դպրոցի մէջ. թող դորա վարչութիւնը չը սպասի ինձանից այդ բանը: Այս մի տարին ևս միայն պիտի հետեւի իւրաքանչիւր մի ուսուցչի ասանելին և անպայմանօրէն պիտի կատարեն նրանց:

Բայց չանցած մի ամիս նա ուսուցիչ է արձակում առանց օրինաւոր պատճառի, առանց յայտնելու Հոգաբարձութեանը: Աշակերտ է արձակում միւր, երկուսը, երեքը և այլն, առանց յայտնելու ստուգելու,*) ար-

*) Տեղի տնօրէնութեան մանր գրքիցներ դրեւեցան դաստիարակում, որտեղ ուսուցիչները պիտի գրէին իրանց նկատողութիւնները թէ աշակերտների և թէ դաստան ալ և ալ դրութիւնների

համարում է հոգաբարձական ժողովը, պարզապէս ապացուցանելով որ ինքն ծառայում է մանուկների կարգին. մի խօսքով համարում է իրան դպրոցի միակ հեղինակութիւն և բոլորը ինչ որ շրջապատում են նորան ոչինչ են: Արձակում է մանկավարժական ժողովները, որովհետեւ նորա առաջարկած կարծիքները ըստ ամենայնի հերքվում էին այնտեղ և այն անձն, որ սկզբում ոչ մի նոր փոփոխութիւն չէր կամենում մտնել դպրոցի մէջ դառնում է մոլի կամայական:

Եւ չը կամենալով ուսուցչական ժողով կազմակերպող անհատների ձայնին մի որ և է վճռողական նշանակութիւն սեփականել, առաջարկում է որ հարցերը ընտելին, պարզապէս, իսկ գործադրել կամ չը գործադրել իրանից է կախած: Ուսուցչական ժողովը կարեւոր է համարում ընդունել մի այդպիսի նորաբնի առաջարկութիւն մանկավարժ տեսչից և պնդում է, որ ժողովը իւր բարոյական նշանակութիւնը չէ կարող վայր ձգել ինչպէս ներքին վճռող կախած է ժողովի կազմից ձայների առաւելութեամբ և ոչ տեսչից: Այս անցից յետոյ հաջիւ կրկին պատահում են ժողովներ և եղածներն ևս լինում են ապարդիւն... Ուսուցչները նկատում են այդ բանը և նոցա կազմակերպութիւնը բաժանվում է երկու: Մի փոքրագոյն մասը, որ մինչև այսօր չը համարվում այդտեղ ներքոյ խմբի նպատակը անգիտակցաբար համարում էր նուրան օգուտակար, այժմ ձանաչելով որոշվում է նորանից և դառնում է հասարակական, որ նոյն է և կարգապահական, իսկ միւս մասը որ իւր նպատակին շատ ձեռնուռ էր համարում մի այդպիսի տեսչի նկատութիւնը միւր նուր է տեսչական, որ նոյն է և ՄԵԼՈՒԱԿԱՆ: Եւ այնուհետեւ տեսուչը լոկ գործիք էր:

Ներակրկնելով վատ են, տեսուչը ուշադրութիւն չէ դարձնում, որովհետեւ տեսուչը իւր պաշտօնական ուսուցչների, ընդ նմին և հոգաբարձուների կարգին էր պատկանում: Ուսուցչները անփոյթ էին, դաստան մէջ ժամանակը ընդ վայր խօսակցութիւններով և անտեղի անպատշաճութիւններով — առաւելագոյն տեսչականից մի քանիսները — առաւելագոյն տեսչականից մի քանիսները իրանց սիրելիների ձեռքով լսելով աշակերտների այդ տրտուեղենները սկսում են աւելի խտութիւն գործ դնել մանուկների դէմ: Հետեւեալը այն է լինում, ինչ որ յայտնի է ընթերցողին Ներս. դպրոցի վերաբերութեամբ: Աւելաբար սորա վերայ և այն, որ ուսուցչներից մի քանիսը նկատելով, որ այլ ևս անկարելի է գործ կատարել այնտեղ, ուր թաղաւորում են բուն կրթիչ, հետեւում են և կը հեռանան շուտով: Իսկ նոցա մնացորդներից կազմված ժողովը վճռում է 24 աշակերտի միանգամայն դուրս վճռելով դպրոցից... Բայց սորան առանց դաստան փոխելու մնացել են, առաջինից 14:

Վերա: Ուսուցիչ պ. Մարտիրոսեան մի անգամ նկատում է, որ Հէջուբեան մի աշակերտ գրիչ էր, երկրորդ և երրորդ անգամ դարձնալ գրիչ էր նոյն աշակերտը և իւրաքանչիւր մի անգամ նկատողութիւնը գրվում էր գրիչի մէջ. Գարձնալ պատահում է, որ նոյն աշակերտը տրոյք անգրիչ է: Ուսուցիչը սորան հարցնում է, տեսուչը քիչ ոչինչ չասից գրիչ մասին, ոչ պատասխանում է մանուկը: Գ. Մարտիրոսեանը մի քանի անգամ մասնաւորապէս տեսչին անկող յետոյ ստիպուած է լինում ասել ժողովի առաջ, աւելացնելով որ ամեն մի անգամ երբ նա դառնում էր աշակերտին թէ տեսուչը քիչ ոչինչ չէ ասել գրիչ մասին, ամաչում էր: Գ. տեսուչը խտաբանութիւն է, որ ինքն չէ նկատել այդ բանը: Բայց անց միւս օրը մանուկ Հէջուբեանի ծնողը — պ. Հէջուբեանը երևում է դպրոցում որպէս բողոքաւոր, որ նորա որդուն արձակել են դպրոցից: Պատճառը ստուգվում է, որ նա գրիչ չէ ունեցել և տեսուչը իւր սեփական ծուղութեան կամ անհոգութեան պատճառով արձակել է նորան դպրոցից: Այսպիսի դէպքեր շատ են պատահել պ. տեսչի գործունէութեան շրջանում...

կրկնորդից նոյնպէս 14. կրկնորդից 8. իսկ չորրորդից 1. երեք էլ վերաբերվող. (ինչպէս երեք, երբ ամենաբարձր առանց բնութեան են), ընդ ամենը բառասուն (40):

Ուրեմն պ. Մանդինեանի հսկողութեան ներքոյ այս տարի բառասուն աշակերտ մնում են առանց դաստան անցնելու, բառ և չորսն էլ արձակվում են. իսկ քսան աշակերտ պատրաստականից չը գիտեն ինչ դաստիարակ են պատկանում, փոխօրինակ, մնացորդների, թէ արձակվողների: Տեսուչը չորրորդ դաստան աշակերտներին արձակելու համար էր շատ պոռ, այդ խնդր քսան մանուկների համար առանձին յայտարարութեամբ ասել է, որ արտասահմանից դառնալով կը յայտնի իւր կարծիքը: Աւելաբար թուանշաններից ձիշտ կը նկատի ընթերցողը, որ տեսուչ Մանդինեանի մանկավարժական ուղղութեանը դժգոհել են մի տարուայ մէջ 84 աշակերտների ձիշտ ընդունակութիւնները:

Շեշտաւոր են մի խնդր և փոքրիկ քահանայ եմ, «Մեղուի» ասածին պէս տարական ուսման հոտ չիմ առել. իմ արդարաւիտ ընկիւնների ասածին պէս երկու տող միմեանց հետ կապել չը չիտեմ. բայց մանուկների հետ բաւական պարագած լինելով, նոցա ընդունողութեան վերայ որոշ հասկացողութիւն եմ կազմել: Միայնապաղտութիւն ասածից ևս միանգամայն մեծում եմ գործունէայ և օրինաւոր պարագայը ուսուցչի աշխատութեան առաջ ի բաց հանելով հաղիւ կրկին բացառում թիւները, որ հաղիւ թէ կարելի էր հաշուել տեսնել մէկ կամ վերջապէս երկու պոքրեղան: Բայց հայ թէ ինչ է պատահում: Ներսիսեան դպրոցում:

Նորա երկրորդ դաստանը այս տարի կար 34 աշակերտ, որոնցից 23-ը ընկնում են դաստան անցնելուց, անցնում են միայն քսան — կիսից ևս պակաս — այդպէս ևս և միւս դաստաններ: Մի թէ սա անհոգութեան արգաւիք է...

Մանդինեանի թիւերը թիւները անձամբ ստուգելով տեսուչ պարտականութեամբ խօսելով և և ահա խօսում եմ միանգամայն արհամարհելով «Մեղուի» իմ մասին արած աղայաժամութիւնների վերայ. և դարձնալ կը խօսեմ, եթէ կը նկատեմ որ պ. Մանդինեանը զկալով արտասահման միայն դարձուր իրան և վերադարձած կը լինի նոյն ուղղութեամբ: Ներսիս հարցին վերաբերած հիտութիւնները առաւելագոյն ստացվում են գործնական կերպով պարագայով մանուկների հետ, նոցա հասարակական շրջանում, քան թէ միայն տեսականապէս: Թող որքան կամենում է բարբառել Մ. և դուք:

Անգամ Հոգ. Մուշեղ քահանայ
Տէր-Ղևոնդեանց

ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

Օգոստոսի 1-ին

Վ. Ու. (Word) ամերիկացին արդէն յայտնի իւր հնձող մեքենայով՝ ամենամօտ ժամանակներս հնարել է հնձող-կապող մեքենայ: Որպէս փորձ հնարողը յիշել է տասներկու մեքենայ՝ որոնցից մէկը միայն ուղարկուած է Եւրոպա, Մոսկուա քաղաքը: Դուք տրանից մի ամիս առաջ Վ. Օ. օրեն է ժամ Երկրագործական մեքենայից մըցում են (КОНКУРЕН) առանց հնձող-կապող մեքենայի գնաց: Նորա առաջին փորձը հին աշխարհում եղաւ տեղւոյ երկրագործական ձեռնարանի կալուածում յուլիսի 28, 29 և 30-ին, այժմ ուղարկուելու է նա Սամարա, իսկ տասն օրից յետոյ դարձնալ կը բանի ձեռնարանիս զաշտերում: Մեքենայի՝ որպէս փորձ և դեռ արտաւորութիւն (пробный) գնաւ չը լինելով՝ յայտնի չէ թէ քանի արժէ:

Այլեղ մեքենայ այդքան թիւթ և որ երկու ձի ամենայն հետաւորութեամբ տանում են նորան և նորա վերա նստող թշուղի, բայց վերջինից ուրիշ բանտերի կարծրութիւն չը կայ, մեքենայն մի վայրկեանում հնձում և կապում է մինչև 15 խութ, իւրի մեքենայները կարգադրում է թըշուղը արդէն որ ոչ իրեն մեծ և ոչ իրեն փոքր խութ չէ ստացվում, ամբողջ մի դէսփաւինի

ցիւնը և տարածողները Մի քանի առանձին անհատները բացառութեամբ, որոնք իրանց կենսիկը նուրբիւն ան զիտութեամբ, մնացածները իրանք է հազիւ թէ հաւատարմ են իրանց ոգիները փրկուել թեանը և յոյս չը գնելով ապագայ կենսիկը վերա- աւելի նիւթապաշտ հայեացք են կազմել, այնա- տեղով այս կ եւ անք ու մ հետեւի վայելչութիւն- ներին, որոնց մէջ գլխաւոր տեղը են ընդունում փառքը հարստութիւնը, տիրապետութիւնը միամիտները վերա և մանաւանդ, թէ և ծածուկ, մարմնի վա- յելչութիւնները։ Այս է կղերի այժման ձգտումը և նորան հասնելու համար ամենայնաւոր միջոց է ժողովուրդը պահել անվերջանալի ստորութեան մէջ, նրան աւելի հեշտ կերպով հարստաւարելու և գործիք դարձնելու համար իր սեփական շահա- տէր նպատակներին։ Քրիստոսի վարդապետու- թեան այժման կեղծ ներկայացուցիչները ոչ ա- ռաջին դարերի իստակ հաւատ և վարք ունեն, ոչ էլ բուական ճարտարութիւն, որ կարողանային իրանց թոյլ կողմերը զարգացած և հասկացող ժողովուրդից ծածկել, ուրիշն մնում է միայն խա- զարել ժողովուրդի զարգանալու և հասկացող դառ- նալու—այս է նրանց ընթացքը։

Ա. Արծրունի

ՆԱԽԱԿ ԳԵՐՄԱՆԱՅԻՑ

Վերադարձ, 15 Օգոստոսի

Չարմանալի երկիր է Գերմանիան... իւրաքան- չիւր ճանապարհորդ, որ թափառում է մի քանի օր կամ մի քանի շաբաթ՝ այստեղից այնտեղ, մնում է ապշած... Այս է ուրիշն այն անուանի երկիրը, հարցնում է նա տարակուսանք, այս է այն զօրաւոր քաղաքակրթիւնը Գերմանիան... Եւ յիշատի, ամեն հարեանցի նայողին, այնպէս է թվում, թէ ոչինչ հասարակական կենսիկ չը կայ այստեղ, տեսնում են պանդոկներում՝ իւրաքան- չիւրը գարեջրի լամպերը առաջին դրած, սիգարան բերանին, կարծես միայն ինքը լինի աշխարհիս շիրտ։ Գնում ես հասարակաց պարտէզները և ոչ մի անձն չես տեսնում, կամ շատ շատ մի քանի պառաւներ գուլպաները ձեռքերին կամ մի քանի զպանակներ իւրեանց երեխաներով, «Հասարակաց կենսիկ չը կայ», ասում է մեր ճանապարհորդը, և այդպէս էլ համոզուած դառնում է հայրենիքը բո- լորովին հաստատուած այն կարծիքի մէջ, թէ ոչինչ միութարական, ուշադրութեան արժանի բան չը կայ Գերմանիայում... Եւ սակայն հասարակական կենսիկը այստեղ շատ զարգացած է. այդ բանի մէջ կարելի է հա- մոզուել երկուր ժամանակ այս տեղ մնալով. պատ- ճառ որ այդ կենսիկը չէ արտապայտում այստեղ այնպէս բաց, անխնայ կերպով, ինչպէս, օրինակ, Ֆրանսիայում։ Գերմանացիին չէ սիրում շատ զաւարդ անել, նա չէ պարծնում իւր արածի վրա, և փոխանակ պոռոտութեամբ իր արածի մասով, աշխատում է լուիկ միջիկ գործ կատարել։ Խօսքերիս ապացոյց կարող են լինել այն զանազան ընկերութիւնները, որ ունի իւրա- քանչիւր քաղաք, այն մինչև անգամ իւրաքան- չիւր գիւղ Գերմանիայում, եւ չեմ խօսում այն ընկերութիւնների մասին, որը կազմում են զա- նազան քաղաքական կուսակցութիւնները, և ոչ էլ ուղղում եմ յիշել այն բազմաթիւ մարդասիրական և բարեգործական եղբայրութիւնները, որոնցով այնչափ առատ է Գերմանիան, իմ խօսքը միայն կրթողական ընկերութիւնների վրա է, ինչպէս, օրինակի համար գիւղատնտեսների, վաճառական- ների, մարմնամարզների, երգչիների, արհեստա- ւորների և այլ ընկերութիւնները. ինչ է սոցա նպա- ական գործակատար երկրասարգների ընկերու- թիւնը։ Քաղաքի մէջ գործակատարներ հաւաքում են միմյան, շինում են կանոնադրութիւն, սար- քում են մի գրադարան իւրեանց արհեստի վերա- բերեալ գրեանց համար, 1) և անաւստիկ ընկե- րութիւնը պարտաւոր է։ Նոքա ժողովում են իւրաքանչիւր շաբաթ միմյան, լուում են դասա- խօսութիւններ ուսումնական անձինքներից, որը ուրախութեամբ մտնում են այդ տեսակ ընկերու- թեանց մէջ, ունին հասարակաց սնդուկ, ուսկից առանց գործի մնացողը կարող է փոխ վեր առ- նել, մի ուրիշը հիւանդանում է և, եթէ չբուր է, դարմանվում է հասարակաց հաշուի, երբորդ մն- աւանում է պանդոկում մէջ և թաղվում դար- ձեալ այդ սնդուկի փողով։—Գիւղատնտեսների ընկերութիւնը բաղկացած ըստ մեծի մասին հա- սարակ գիւղացիներից, ունի քաղաքում իւր շա- բաթական ժողովները, որ գիտական երկրա-

գործները դասախօսութիւն են անում, Այս ընկե- րութիւնները ուղարկում են իւրեանց հաշուի ուսումնական անձինքներին արտասահման. ուրա- ղում են Անգլիա և Բելգիա, և անձամբ ծանո- թանալով գիւղատնտեսութեան մէջ մտցրած նո- րաձեւութիւններին, դառնում են իւրեանց տեղը և հաշիւ են տալիս ընկերութեան իւրեանց տեսածին ու լաւծին վրա։ Մի քանի մերձակայ ընկերու- թիւններ միմյանք հրատարակում են մի երկրա- գործական լրագիր, ուսկից իւրաքանչիւր ընկերու- թիւն կանոնաւոր կերպով տեղեկութիւններ է ստա- նում միւս ընկերութիւնների գործունէութեան մասին։ Սարքում են գիւղատնտեսական բոյսերի և անասունների հանդէսներ, նշանակում ընծաներ և մրցանակներ, Գնում են երկրագործական մեքե- նաներ հասարակաց գործածութեան համար, և այլն։—Մարմնամարզների ընկերութիւն, որ իւ- րաքանչիւր քաղաքում կարելի է տեսնել, և ուր իւրաքանչիւր ռք, ամեն չափ ու հասակի անձն կարող է անդամ մտնել։ Այս ընկերութիւնները ունեն իւրեանց ամսական ժողովները, տօնախմբ- րութիւնները, հաւաքում են տարին մի անգամ մի մեծ դաշտի մէջ և ժողովրդի բազմութեան առաջ ցոյց են տալիս իւրեանց ոյժը և մարմնի ճարպկութիւնը. ստանում են այդտեղ ձեռագործ ընծաներ սիրուն օրտորները, որոնք իւրեանց քեջոյժ ձեռները աշխատեցնում են շաբաթներով այդ գերմանացի շէնդուկների համար. յետոյ լինում է պար, երաժշտութիւն, ճառախօսութիւն- ներ, երեկոյին թատրոնական ներկայացում, որ տալիս են նոյն իսկ իւրեանք մարմնամարզները։ Այդ օրը բոլոր քաղաքը դառնում է մի սիրտ, մի հոգի, կարծես մի անգլին ընտանիք, որի իւրա- քանչիւր անդամ մասնակցում է ընդհանուր դարաճութեան, Այսպէս են հաւ Գերմանիայի ընկերութիւնները։ Աւելորդ է ի հարկէ ասել, թէ ինչ մեծ կրթողական նշանակութիւն ունեն սոքա նոր սերունդի համար. ինչ է պատճառ, որ Ռու- սաստանում ամեն ուրեք պրիկաչիկները կաղ- մում են հասարակութեան ամենաանբարոյական մասը, որովհետեւ չը գիտեն, թէ ինչպէս անցկա- ցնեն իւրեանց ազատ ժամերը։ Ճշմարիտ է, որ այստեղ մեծ դեր է խաղում ընդհանուր կրթու- թեան աստիճանը, բայց միթէ կարելի է ուրանալ նաեւ այդ տեսակ ընկերութիւնների բարեբար աղ- զեցութիւնը։ Մի գերմանացի գործակատար անդամ է մի քանի ընկերութեան, այսօր նա իւր ընկե- րութեան ժողովումն է, լուում է մի գիտականի դասախօսութիւնը, միւս օր նա գնում է երգիչ- ների ժողովը և ուսանում է ամբողջ երեկոյին կա- նոնաւոր երաժշտութեամբ երգել, երբորդ օրը մարմնամարզների մօտ նա դարգացնում է իւր ֆիզիկական ոյժը, թողնելը այն ընդհանուր կրթո- ղական աղբեղութեանը այդ ընկերութիւնների, ուր նա առիթ ունի մտաւորապէս, բարոյապէս և ֆի- զիկապէս զարգանալ։—Արդէն այն հանգամանքը միայն, որ այդ ժողովները նորան ամբողջ երեկո- յին զբաղեցնում են, այդ միայն արդէն բաւական աղբեղութիւն ունի նորա բարոյականութեան վրա։

Անցեալ շաբաթ կատարուեցաւ այստեղ նա- հանգիս երգչիների տարեկան տօնախմբութիւնը. 64 ընկերութիւններ զանազան քաղաքներից և գիւղերից, բաղկացած մօտ երկու հազար երգիչ- ներից մտան փառաւորապէս քաղաք իւրեանց զրօշակներով, բոլոր քաղաքը դիմաւորեց նոցա երաժշտութիւններով և կեցցէներով։ Միւս օրը կարծէր տեսնել, թէ ինչ զօրութիւն ունի կանո- նաւոր երգեցողութիւնը, մանաւանդ այդչափ եր- գչիների բերանից։ Մեզանում չէ թէ երկու հա- զար, այլ երկու հոգի որ միմյան երգելու լինեն, պէտք կը լինի անպատճառ թողուլ փախչել իսկ այստեղ մարդը սքանչւած, վերացած է մնում։ Մատաղանաւ աղվիւնք ձիւնափայլ զգեստ- ներով զարդարում են երգչիների զրօշակները կանաչ ծաղկեայ պսակներով, ճարտասանների հաւանդուն ձառերը, նուազաբանների օղը հնչ- չեցնելը, ժողովրդի կեցցէները—այս բոլորը մի այնպիսի քաղցր տպաւորութիւն է անում, որ մարդ հիացած հարցնում է, թէ ինչպէս կա- րող են այդ մարդիկ այնպիսի չնչին միջոցներով այդ աստիճան ազնուացուցիչ դուրաճութիւններ հնարել։ Այնուհետեւ այդ երկու հազար հոգին իւրեանց զրօշակներով բոլոր քաղաքը մէջ թափօր ման դալով՝ կարծես ուղում էին թողնել քաղա- քացոյց սրտերում մի անջնջելի տպաւորութիւն... Պէտք էր տեսնել, թէ ինչպէս երեկոյն ողեռ- րուած, երգչիների առաջից վազելով, թնդացնում էին, օղը իւրեանց աղաբակներով, ո՞վ գիտէ, ինչ- պէս բարեխում էին ուրախութեանց նոցա անմեղ մանկական սրտերը, ո՞վ գիտէ ինչպէս անհամբեր են, որ մի օր ուսումնաբանից դուրս գալով՝ իւ- րեանք էլ մտնեն այդ ընկերութիւնների մէջ, ինչ-

պէս կարելի է, որ նա այնուհետեւ անուշադիր լինի զայրուում երգեցողութեան դասի ժամանակ, երբ տեսնում է, որ չափահաս անձինք այդպէս մեծ նշանակութիւն են տալիս կանոնաւոր երգե- ցողութեան... Եւ, բարեկամ, ասացի, Հայկայ թոռները միթէ այնչափ յիմար են, որ այդպիսի զարդակ բաներով ժամանակ փչացնեն... Նոցա միթէ կարելի է տեսնել մի այնպիսի տեղ, ուր որ չը կայ նիւթական շահ, կարելի է գտնել մի այն- պիսի ընկերութեան մէջ, ուր որ չը կայ անաս- նական կամ մի այլ բնական զուարճութիւն... Նիւթական շահ... ինչ է հասկանում մեր հայը զորանով։—Հարկաւ ամենայն տեսակ արժէք ու- նեցող բան, որ մտնում է անմիջապէս նորա զըր- պանը... Նորա ինչ փողով, թէ չը չապաւորող հա- սարակութիւնը անզարգացած, անբարոյական լի- նեցող՝ նորա սեփական օգտին ամեն ժամ, ամեն վայրկեան վնասներ է սպառնում... ինչ հոգ, թէ նրա պրիկաչիկը անհատաւորութիւնների է գոր- ծածում թէ նրա անդուկին, և թէ նրա ընտանե- կան սրբարանին։ Ինչ հոգ, թէ ազնիւ մարդոց պակասութեան պատճառաւ, նա շատ անգամ ստիպուած է լինում իւր աղվիկը փչացած բա- րոյականութեան տէր երկրասարգների կնուկեան տալու և այդ կերպով իւր զաւակի կենսիկը իւ- պառ թոռնաւորելու։ Ինչ վնաս, եթէ որդիքը անառակ դուրս կը գան և նորա հարստութիւնը կը վնասեն, կամ եթէ ինքը իրեն կարտատէր բաւականանում է իւր պարտաւոր կեղծ սնանկա- ցողներից հարկերից 10—15 տոնաւորով... Այդ ամենը նորա համար անխտաւարիկ չարիք են, ինչպէս կարկուտը, մարախը, երկրաշարժը և այլն. նա սովորած է այդ գեղեցկութիւններին, ինչպէս Մահմետից անխնայ և կենդանի իւրեան շրջա- պատող կեղտոտութեան... «Հին սերունդից յոյս չը կայ», ասում էր իմ փորձառու բարեկամներից միւր սորանից զուտ տաք տարի առաջ, այն ժա- մանակ ես նորան չէի հաւատում, բայց այժմ այդ ճշմարտութիւնը ինձ նոյնչափ պարզ է, ինչպէս երկու անգամ երկու—որոշը։ Մնում է ուրիշն նոր սերունդը, բայց երբ տեսնեմ, որ նորանից էլ յոյս չը կայ, այն ժամանակ... Բայց լաւ է որ չը յուսահատվեմ, այլ փորձեմ, ինչ որ կարելի է անել։ Գալ նամակիս մէջ էլ խօսեմ, թէ ինչ կերպով կարելի է այն վերոյիշեալ ընկերութիւն- ներից մի քանիսը իւրագործել մեզանում,

Օձնեցի

ՆԱԽԱԿ ՍԱԼՄԱՍՏԻՑ

27 Յուլիսի

Պարսկաստանի և Տաճկաստանի սահմանա- գիւծները, սկսեալ Բայազէդից մինչև Բարաք, կամ Պարսից ծոցը, ճշտութեամբ որոշված չը լի- նելով, շատ անգամ ծագում էին վիճաբանու- թիւններ երկու պետութիւնների մէջ այս և այն երկրների մասին, որոնք անցել էին մինչև կամ միայն իշխանութեան ներքոյ։ Բայց զրանից, նոյն գծի վրա, որ բաժանում էր Պարսկաստանը Տաճ- կաստանից, բնակվում էին քրդերի զանազան ցեղեր, որոնց այս երկու պետութիւններից որի հպատակ լինելը յայտնի չէր։ Քրդերը իրանց բէգերի առաջնորդութեամբ մի քանի տեղերում բոլորովին անկախ և ապստամբ դրութեան մէջ էին, նրանք—որպէս յատուկ է մի աւագակ ազգի— շատ անգամ թալանելով Պարսկաստանից՝ անց- նում էին դէպի Տաճկաստան, շատ անգամ ևս Տաճկաստանում նոյնը գործելով՝ անցնում էին դէպի Պարսկաստան։ Սահմանադրեան ոչ մի պահանջութիւն չէր կարողանում նրանց արշա- ւանքների առաջն առնել։ Աւագակները մնում էին միշտ անպառիտ, որովհետեւ մի կողմից նրանք պատսպարութիւն էին գտնում անաւտելի լեռ- ներում, միւս կողմից, տեղային կառավարութիւնը պաշտպանում էր նրանց, երբ մի անգին ամբոխ չարագործներին, կողպտներով իւր զրացի տէրու- թիւնից, ապաստան էին խնդրում և պատրաստ էին իւրեանց բերած աւարը բաժանել տեղային կառավարութեան հետ։ Այս անկարգութիւններն աւելի զգալի էին այն կողմերում, ուր դրած են խօյ, Սալմաստ, Ուրմի, Ուշնի, Սօլուխուրախ, գաւառները մինչև Սուլէյմանիէ քաղաքը, ուր բնակչիներից որոշութեամբ միշտ անհանգիստ և վը- րանգաւոր վիճակի մէջ էր քրդերի արշաւանք- ներից։

Նրկու պետութիւնների, Պարսկաստանի և Տաճ- կաստանի, Բարձ, կառավարութիւնը չէր կարող ուշադրութիւն չը դարձնել վերոյիշեալ անկարգու- թիւնների վերա, որի հետ կապված էր ժողովրդի անհանգստութիւնը և նրանց կայքի անապահո- վութիւնը։ Սահմանադրութիւնը պէտք է ճշտու- թեամբ որոշվէին, և քրդերին նուաճելով, հաս-

տատարանկ ժողովուրդը դարձնէին։ Այս միտքը Պարսկաստանի մէջ ծագեց զեռ այն ժամանակ, երբ տակաւին կենդանի էր երեւել Ամիրը *), բայց մեծ վիզիրի մահը թողեց անկաւար նրա զիտաւորութիւնը։

Նորին Մեծութեան Շահի Եւրոպայի ճանա- պարհորդութիւնից դառնալէն յետոյ, իւր տէրու- թեան մէջ մտցնելու նկատի առնված բարեկար- գութեանց թուում կարելի է դասել և Տաճկաս- տանի ու Պարսկաստանի սահմանադրութիւնը կարգի դնելու, կամ քրդերին մասին մի որոշումն անելու հարցը, որը տեղի ունեցաւ մի քանի ամիս առաջ։ Բայց որովհետեւ մի այնպիսի հնացած և բաղաձիւժաւ հարցը չէր կարող պարզվիլ առանց երկար վիճաբանելու, և դուրս նրա վերջին վիճառը կը տրվէր սրով, այս պատճառաւ երկու տէրու- թեանց կողմից ևս սահմանի մօտ այժմ հաւաքված են նրանց զինուորական ուժերը։ Պարսկաստանի զինուոր բանակը դրած է Սալմաստայ Գիրիչի գիւղի մօտ, իսկ Տաճկաստանինը՝ Հաղաւկայ մէջ, ինչով կը վերջանայ գործը զեռ յայտնի չէ, միայն տեսալ թէ խաղաղութեամբ կը լինի որոշումը փոքր ինչ տարակուսական է, քանի տար պետութեանց միջամտութիւնը չը ներգործէր իւր կողմից։ Պա- տերազմը շատ ցաւալի հետեանքներ կարող էր ունենալ երկու կողմից ևս ժողովրդի համար։ որովհետեւ մահմանական ազգերի մէջ պատերազմի միջոցներում ամենին խնայողութիւն չէ լինում խաղաղաւէր ժողովրդի թէ կայքին և թէ կեան- քին։

Մի օր առաջ ես բախտ ունեցայ Պարսից բա- նակը մտնելու, ինձ տարաւ իւր հետ որպէս թարգման Արաքատականի հայոց Առաջնորդ Ան- գրէաս արք-եպիսկոպոսը, որ կամենում էր տե- սութիւն անել Սահարդիւնի (Արաքատականի ընդհանուր զինանապետի) և Մուհամմէդ Ռահմի— Միրզայ իշխանի հետ, որը խօյ և Սալմաստ գա- ւառների այժման նահանգապետն է։ Այդ երկու երեւելի պաշտօնականներ խօսակցութիւններից ինձ վերա քաղցր տպաւորութիւն թողեցին այն խօսքերը, որոնք վերաբերում էին ժողովրդի հա- սարակական բարեկաւութեանը և նրա հանգստու- թեանը։ Հաւասարութիւն բառը, առանց խտրութիւն դնելու կրօնի և ազգութեան, միշտ զարկում էր իմ ականջներին, երևում էր, այդ և դրանց նման մարդիքը, որոնք կառավարում են պետութեան մեծամեծ գործերը, հասկացել են ժամանակի պահանջմունքը, բայց մի բան, որ միշտ արդիւք է դնում նրանց իրագործել հասա- րակաց բարիք, է ժողովրդի մէջ դարբնով թան- ճրացած խաւար նախապաշարմունքը, որը փա- րատու համար պէտք է հինաւոր ուսում և կրթութիւն,—այդ պակաս է Պարսկաստանին։

Բայց մտաբերելով անցեալը, պէտք է ներկայի մասին գտն լինել Աստուծոց, զրանից առաջ եթէ մի գուռը պարսկական զօրք մի երկրով անցնէր, այլ ևս այն երկրի մէջ շինութեան հետք չէր մնալ, թող թէ, նոյն իսկ երկրից պատկանում լինէր նոյն պետութեանը, որին ծառայում էր զօրքը։ Այժմ Սալմաստայ մէջ գտնված բանակը բաղա- նում է՝ բաւականին մեծ բազմութիւն ունեցող հնձեղազորներից և հետեակներից, բայց մինչև այ- սօր չէ պատահել որ զինուորները հարստաւարէին ժողովրդին, իրանց համար ձրի ուտելիք կամ խմելիք պահանջելով։—Ամեն ինչ, որ պէտք է նրանց, գնում են փողով, այդ առաջին անգամն է տեսնվում այս կողմերում, որ սարվազը չէ խլում, չէ կողպտում, չէ յափշտակում, բայց ապ- րում է կուշտ փողով, ստանալով պաշար իւր կա- ռավարութիւնից։

Բացառութիւններ ի հարկէ լինում են, սկզբանէ օրինաւոր կարգապահութեան չը սրոված զինուոր- ների մէջ դժուար է միանգամով մտցնել խիստ զիտցիլլինաւ։ Քանի օր առաջ գիւղերով սպանդի- ցաւ մի հայ երիտասարդ, որ գնում էր մօտակայ գիւղն, ասում են, թէ սպանութիւնը պատահել է թուրք զինուորներից, չը նայելով տեղային կա- ռավարութեան խուզարկութիւններին, չարագործը չը յայտնվեցաւ։

Մէլ.

*) Միրզայ-Թաղի-խան Ամիրը, որ հասաւ վը- զիրութեան պաշտօնի, առաջինն էր այն մարդե- րից, որ ներկայ դարուս երկրորդ կիսաբաժնում գործում էր Պարսկաստանի բարեկարգութեան հա- մար, բայց նրա ցաւալի զլխատումը հարկաւոր տարիներով յետ մեղց Պարսկաստանի յառաջա- դիմութիւնը։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հաղորդում են որ Վիկտոր Զիւզօ ներկայ տարվայ ընթացքում զիտաւորութիւն ունի ի լոյս ընծայել մի նոր գիրքը n'Art d'être grand-père

1) Ընդհանուր զրադարաններ կարելի է տա- նակներով համարել այստեղ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ